

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏՎԱՍԽԱՆՆԵՐ

ՀԱՐՑ 1. Արդյո՞ք կարող եմ վերականգնել իմ ID համարը Վաճառքների կենտրոնում:

Պատասխան. Այո, կարող եք: ID համարը վերականգնելուց անմիջապես հետո խորհուրդ ենք տալիս Վաճառքների կենտրոնում* տեղադրել առաջարկվող սննդային ծրագրի պատվեր՝ Ձեր գեղչի ակտիվացման նպատակով: Պատվերը կտեղադրվի 35% կամ 42% զեղչով:

ՀԱՐՑ 2. Արդյո՞ք կարող եմ հեռախոսով վերականգնել իմ ID համարը:

Պատասխան. Այո, Դուք կարող եք կապվել Herbalife Nutrition-ի՝ ID համարի վերականգնման հեռախոսագծով՝ զանգահարելով 0 800 01 070 հեռախոսահամարով, խորհուրդ ենք տալիս տեղադրել առաջարկվող սննդային ծրագրի պատվեր՝ Ձեր գեղչի ակտիվացման նպատակով: Պատվերը կտեղադրվի 35% կամ 42% զեղչով:

ՀԱՐՑ 3. PIN-ծածկագիրը մոռանալու դեպքում արդյոք կարո՞ղ եմ վերականգնել այն MyHerbalife.com կայքում:

Պատասխան. Այո, ID համարը վերականգնելուց հետո Դուք կարող եք MyHerbalife.com կայքում վերականգնել Ձեր PIN-ծածկագիրը, եթե Ձեր ID համարի վրա նշված է էլեկտրոնային փոստի գործող հասցե: PIN-ծածկագիրը հնարավոր է վերականգնել նաև՝ զանգահարելով Herbalife Nutrition-ի Անկախ գործընկերների Աջակցության կենտրոն:

ՀԱՐՑ 4. Անկախ գործընկերների վերականգնման ակցիային մասնակցելու համար կա՞ որևէ սահմանափակում՝ կապված ID համարի գործողության ժամկետի դադարեցման հետ:

Պատասխան. Սահմանափակումներ չկան: Դուք կարող եք մասնակցել ակցիային՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է արգելափակվել Ձեր ID համարը: Կախված արգելափակման ամսաթվից՝ կարող է առաջանալ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտություն: Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել Herbalife Nutrition-ի Անկախ գործընկերների՝ Ձեր երկրում գործող Աջակցության կենտրոն:

ՀԱՐՑ 5. Արդյոք անհրաժեշտ է վճարել Սպասարկման տարեկան վճարը Անկախ գործընկերների վերականգնման ակցիային մասնակցելու համար:

Պատասխան. Ոչ, վճարելու անհրաժեշտություն չկա: Խորհուրդ ենք տալիս տեղադրել առաջարկվող սննդային ծրագրի պատվեր՝ Ձեր գեղչի ակտիվացման նպատակով: Պատվերը կտեղադրվի 35% կամ 42% զեղչով: Ընկերությունը կտրամադրի սպասարկման լրացուցիչ տարի:

- Մոսկովյան գրասենյակի աշխատանքային ժամերին՝ երկուշաբթի–ուրբաթ, ժամը 07:00–19:00:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏՎԱՍԽԱՆՆԵՐ

ՀԱՐՑ 6. Արդյո՞ք անհրաժեշտ է տեղադրել ապրանքային պատվեր Անկախ գործընկերների վերականգնման ակցիային մասնակցելու համար:

Պատասխան. Խորհուրդ ենք տալիս տեղադրել առաջարկվող սննդային ծրագրի պատվեր՝ Ձեր գեղչի ակտիվացման նպատակով:

ՀԱՐՑ 7. Ե՞րբ է անհրաժեշտ տեղադրել պատվերը:

Պատասխան. Պատվերն անհրաժեշտ է տեղադրել ID համարի վերականգնման օրը:

ՀԱՐՑ 8. Արդյո՞ք կարող է հովանավորը վերականգնել իր Անկախ գործընկերներին, ում ID համարները նախկինում հեռացվել են:

Պատասխան. Ոչ, չի կարող: Անկախ գործընկերը պետք է անձամբ ներկայանա Վաճառքների կենտրոն կամ կապվի Herbalife Nutrition-ի ID համարի վերականգնման հեռախոսագծով՝ զանգահարելով 0 800 01 070 հեռախոսահամարով, և հաստատի իր անձնական տվյալները:

ՀԱՐՑ 9. Արդյո՞ք անհրաժեշտ է որևէ փաստաթուղթ ներկայացնել Անկախ գործընկերների վերականգնման ակցիային մասնակցելու համար:

Պատասխան. Անձնագրային տվյալների փոփոխման դեպքում նախապես անհրաժեշտ է ներկայացնել անձնագրի 2-րդ, 3-րդ և 5-րդ էջերի պատճենները: Անվան փոփոխության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ Անվան փոփոխության ձևը, անձնագրի 2-րդ, 3-րդ և 5-րդ էջերի և փոփոխությունը հաստատող փաստաթղթի (ամուսնության/ամուսնալուծության կամ անվան փոփոխության վկայական) պատճենները: Բնակության և/կամ հաշվառման հասցեի փոփոխության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հասցեի փոփոխության ձևը, ինչպես նաև անձնագրի պատճենը, եթե հաշվառման հասցեն փոփոխվել է:*

ՀԱՐՑ 10. Որպես հովանավոր կարո՞ղ եմ ընկերությունից ստանալ նախկինում հեռացված իմ Անկախ գործընկերների կոնտակտային տվյալները:

Պատասխան. Համաձայն անձնական տվյալների պաշտպանության կանոնների՝ ընկերությունը չի կարող փոխանցել այն Անկախ գործընկերների կոնտակտային տվյալները, որոնց Պայմանագրերի գործողությունը ժամանակավորապես դադարեցվել է: Մի շարք երկրներում ընկերությունն Անկախ գործընկերներին ինքնուրույն է տեղեկացնում վերադարձման ակցիայի անցկացման վերաբերյալ:

*Անձնագրի պատճենը, որտեղ կարտացույլի հաշվառման հասցեն, անհրաժեշտ է ներկայացնել միայն վերջինիս փոփոխության դեպքում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏՎԱՍԽԱՆՆԵՐ

ՀԱՐՑ 11. Որտե՞ղ կարող է հովանավորը տեղեկատվություն գտնել իր ստորադաս կազմակերպության մասին, որը վերականգնվել է ակցիայի շրջանակներում:

Պատասխան: Հովանավորը կարող է այս տեղեկատվությունը տեսնել myherbalife.com կայքի Անձնական գրասենյակում: Անձնական գրասենյակի մեջ մուտք գործեք Bizworks, բացեք «Ստորադաս կազմակերպության համառոտ նկարագիր plus» հաշվետվությունը, կիրառեք զտիչ ըստ սերունդների, կարգավիճակի և ժամանակաշրջանի, բացեք «Լրացուցիչ պարամետրերը» և նշեք «Վերականգնել վերադարձման ակցիայի շրջանակներում»: Սեղմեք «ՀԱՇՎԱՐԿ» կոճակը: